352/4-21 MAR 2010

დადგენილება სასოფლო საბჭოებთან მეცხოველეობის სექციებისა და სოფლად ზოოვეტრწმუნებულთა ინსტიტუტის მოწყობის შესახებ
საქ. სსრ სახალხო კომისართა საბჭოს და ეკონომიური საბჭოს საქმეთა მმართველობის გამოცემა.

352/Հ-94

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԶՈՈՎԵՏԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի յեվ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումը 1935 թ. փետրվարի 20-ին (Վ.ՍԽՀ Օրենքն. ժող. № 7, հոդվ. 34)]

Անասնապահությունը բազմակողմանի սպասարկելու նպատակով և ապահովելու համար նրա արագ բարձրացումը՝ Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. Ամեն մեկ գյուղխորհուրդին կից, ներգրավելով գյուղական ակտիվը, կազմակերպել անասնապահական սեկցիա, վորի նպատակն ե՝ անասնապահական տնտեսությունների ոգնության գործը կազմակերպել և անասնապահական զարգացման համար ձեռք առած միջոցառումների վրա հսկել։

2. Անասնապահական սեկցիաների վրա դնել՝

ա) կազմակերպել լայն մասսայական բացատրական աշխատանք անասնապահական զարգացման համար՝ կառավարության և կուսակցության կողմից տարվող միջոցառումների մասին.

բ) ստուգել անասունների զոովետսպասարկման կազմակերպումը և միջոցներ ձեռք առնել, համաձայն գործող կանոնների, ոգնելու անասնապահական տնտեսություններին՝ նրանց կողմից ձեռք առած միջոցառումները կիրառելու գործում.

գ) մոբիլիզացիայի յենթարկել կոլխոզնիկներին, կոլխոզնիկուհիներին և աշխատավոր միասնական տնտեսություններն անասնապահության համար սեզոնային աշխատանքներ տանելու (խոտհավաքման կամպանիա, սիլոսային կամպանիա, կերի բանջար ցանելու և այլն) և ապահովել այդ կամպանիաների պլանների իրականացումը.

դ) հսկել անասունների կերի պահպանման և ժամանակին նրանց կայանը բերելու վրա, նաև կերը ռացիոնալ ծախսելու գործի վրա.

յե) միջոցներ ձեռք առնել գյուղխորհրդում լրացուցիչ կերի ռեսուրսներ հայթայթելու (կաղին, հաճար, բանջարանոցային, բախչաների, այգեգործության մնացորդներ և այլն) և ապահովել նրանց մոբիլիզացիան ու լրիվ ոգտագործումը.

12 AUG 2013



դ) կազմակերպել ոգնություն և ոպերատիվ ղեկավարություն բոլոր կոլխոզներում անասնապահական բներ սարքելու համար, նաև անասուններ չունեցող կոլխոզնիկներին և աշխատավոր միանձնական տնտեսություններին անասուններ, տնային թռչուններ և մեղուներ մասնատրելու.

ե) սիստեմատիկորեն հայտնաբերել պատճառները, վորոնք արգելք են հանդիսանում անասնապահության զարգացմանը և ապահովել նրանց վերացումը (անասունները քշելու ճանապարհի բացակայությունը, կեր տալու տեղերի բացակայությունը, անասունների հիվանդությունները և այլն).

ը) ճշտորեն բաշխել արոտատեղերը յերկարատև ոգտագործման համար անասնապահական տնտեսությունների մեջ, կազմակերպել արոտատեղերի ռացիոնալ ոգտագործումը և ապահովել ամենապարզ միջոցառումների կիրառումը նրանց բերքավորումը բարձրացնելու համար.

թ) իրագործել միջոցառումներ ապահովելու համար բեղմնավորման կամպանիան (բեղմնավորման կետերի կազմակերպումը, բարվոքված արտադրողներ աճեցնելը և ձեռք բերելը ըստ այն քանակի, վորը անհրաժեշտ է գյուղխորհրդի բեղմնավորման կոնտինգենտի համար) և կազմակերպել մատաղ անասունների մաքսիմալ աճեցումը.

ժ) ստուգել կոլխոզներում, ապրանքային ֆերմաներում և սովխոզներում անասնապահությունը սպասարկող կադրերը և միջոցներ ձեռք առնել փոխարինելու անպետքներին ստուգված և փորձառություն ունեցող աշխատավորներով.

ժա) միջոցներ ձեռք առնել ապահովելու պլանների կատարումը՝ անասնապահական պրոդուկցիան հանձնելու պետությանը նրա կողմից հաստատված ժամկետներին.

ժբ) հայտնաբերել և մերկացնել կուլակային և հակախորհրդային տարրերի հնարքները, վորոնք պրովոկացիայի միջոցով աշխատում են առաջ բերել վիժում և անասունների շարդում ու նրանց դեմ պայքար կազմակերպել.

ժգ) ոպերատիվ ղեկավարել և իրագործել կազմակերպչական միջոցառումները անասնապահության շուրջը տարվող մասսայական կամպանիաների (մրցումներ, ցուցահանդեսներ, անասունների ընտանիքով ցուցադրումը և այլն).

ժդ) կազմակերպել ոպերատիվ հաշվառում գյուղխորհրդի անասնապահության ցուցանիշների և ներկայացնել այդպիսիները շրջանային որգաններին այն ձևերով և այն ժամկետներին, վորոնք հաստատված են դիրեկտիվ որգանների կողմից։

3. Իրականացնելու համար անասնապահության զարգացման հետ կապված խնդիրները՝ գյուղխորհուրդներին կից սարքել Զոովետլիազորների ինստիտուտ գյուղական ակտիվիստներից, վորոնք տեղյակ են անասնապահության գործին, ամրացնելով վոչ պակաս քան մեկ լիազոր ամեն մեկ 20—25 ծխին։



Զոովետլիազորների վրա դնել պատասխանատվություն՝ նրանց հատկացրած շրջանում անասնապահության ամրացման աշխատանքի գործը տանելու համար։

4. Առաջարկել ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզի կենտրոնական գործադիր կոմիտեներին, շրջանային գործադիր կոմիտեներին և գյուղխորհուրդներին՝ մեկ ամսվա ժամանակամիջոցում ապահովել անասնապահական սեկցիաների և զոովետլիազորների ինստիտուտի կազմակերպումը։

5. Առաջարկել Վրաստանի ՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիսարիատին յերկու դեկադային ժամանակամիջոցում ներկայացնել Վրաստանի ՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին վորոշման նախագիծը Վրաստանի ՍԽՀ որենսդրության այն փոփոխությունների մասին, վորոնք բխում են սույն վորոշումից։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0215546

გამომცემელი საქ. სსრ ს. კ. ს-ოხ საქმეთა მმართველობა 1935 წ. № გ-2

ქაღალდის ფორმატი 62×94 სანტ.; 1/4 ბეჭდვ. ფურც.; 1 ბეჭდვ. ფურც. 47.000 სტამბ. ნიშანი. გადაეცა სტამბას 2/IV; ხელმოწერილია დასაბეჭდად 23/IV; ტირაჟი 150.

მთავლ. № 1313. „ტექნიკა და შრომა"-ს გამომცემლობის სტამბა. ტფილისი. შეკვ. № 752.

39.859

5 355